



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈԿՈՄԻՏԵԻ ԹՂԹԱԿՅԻ ՀԵՏ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԻՐ ՉՈՐՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՎԵՐԱԴԱՐՁԻՆ**

**Հարց—Վեհափառ Հայրապետությանը, թույլ տվեք Սովետական Հայաստանի ռադիոկոմիտեի անոնից Զեզ մաղթել բարի վերադարձ Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին։ Զեր երկար ճանապարհորդության ընթացքին թեև մենք հետեւիցինք Զեր գործունեության և այդ մասին հաղորդեցինք մեր ռադիոուսինիքիներին, սակայն շատ հաճելի պիտի լիներ մեզ համար, իթե բարի լինեիք Զեր կենդանի խոսքով պատմել մեր ունկնդիրներին Զեր ուղևորության և Զեր ստացած տպավորությունների մասին։**

**Պատասխան—Մեր այս չորրորդ ուղևորությունը արտասահման տեսք ավելի քան երկու ամիս, այսինքն հոկտեմբեր 7-են մինչև գեկտեմբեր 17, չաշշված այն օրերը, որ անցուցինք Մոսկվայի մեջ, մեկնումի և վերադարձի առթիվ։ Այս ճանապարհորդության ընթացքին օդային գծով Մենք կտրեցինք ավելի քան 30 000 կմ։ Ճամբար, այցելելով Անգլիա, Հորդանան, Եգիպտոս և Հնդկաստան։**

**Բոլոր այս երկիրները Մենք տարինք կենարար ողջուն և օրհնություն մեր հավատքի բազմադարյան կեղրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինեն և մեր վերածնած Մայր Հայրենիքն։ Իրոք, նաև այս անգամ, արտասահման ապրող հայ ժողովովով, ամեն տեղ ուր Մենք գտնվեցանք, անսահման հրճվանքով և ցընծության աղաղակներով ընդունեց այդ կենարար օրհնությունը, որ Մեր միջոցով իրենց կրաշխվեր և լմեց Մեր խոսքը նույն-ոգնորոշյամբ է մասին։ Մայր Աթոռին հոգեր, կը թական և շինարարական կյանքի հառաջդիմության, ինչպես և մեր Մայր Հայրենիքի վերաշինության և ծաղկման։**

**Անգամ մը և Մենք զգացինք և խորապես մխիթարյանք բահսնելով, թե Մայր Աթոռում**

**հայությունը ինչքան հարազատությամբ և շերմությամբ կսիրե իր պապերու Ս. Երկիրը՝ Հայաստան և իր կրոնական հավատքի Սըրբություն Սբրոցը՝ Ս. Էջմիածինը։**

**Ամեն տեղ նույն հայը, նույն հավատավոր և հայրենակարոտ պանդուխա հայը, որ չի կրնար իր արցունքը զսպել, երբ կխոսվի իրեն Արարատի, Մայր Հայաստանի և Ս. Էջմիածինի մասին։**

**Մենք պիտի ոգեկոշենք միայն մեկ դրվագ, արտահայտությունը անմեղունակ աղջնակի մը, որ գուցից լավագույնս կրնորոշե արտասահմանի հայության ապրումը հայրապետական այցելության առթիվ։ Այդ պատահեցավ Աղեքսանդրիքա Մեր այցելության նախորդող օրը, Մելքոնյան մանկապարտեղի դաստիարակչուհին կխոսի իր աշակերտներուն, հայտնելով, թե հաջորդ օրը Հայոց Հայրապետը իրենց մոտ պիտի գա այցելության։ Հինգ առեկան աղջնակը, դուստրը Աղեքսանդրիքայի շատ ծանոթ աղջայիններեն մեկուն, երբ տուն կվերադառնա, կվագե մորը մոտ և բարձրածայն կրացականչե։ «Մամա, վաղը Հայաստանը մեր դպրոցը պիտի գա»։**

**Ամեն տեղ ուր Մենք եղանք, բազմահազար հայեր, բոլորը անխտիր, երազող քաղցր աշքերովկ և բարախուն սրտով կիսնդրեին Միկոմե, որ Մեր վերադարձին իրենց հարազատ սիրո և հավատարմության ողջունը բերենք հայոց մայր հողին և Ս. Էջմիածինին, մայրաքաղաք Երևանին և խաղաղության մեջ ապրող ու անող իրենց Հայաստանի քույրերուն ու Եղիսայիրներուն։**

**Համաձայն Մեր ծրագրին, նախ այցելեցինք Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցին և համայնքը, ուր այժմ կապրին ավելի քան 3.000 հայեր։**

Հոնդոնի մեջ շատ հաճելի եղավ Մեզի հանդիպի Անգլիկան եկեղեցու Պետ, Փենտրքերի Արքեպիսկոպոս գերազնորհ գոկտ. Մայթը Ռեմզիին, որ ամբողջ աշխարհի մեջ հոգևոր բարձր հեղինակություն վայելող եկեղեցական մեծ դեմք մըն է, զերմապես բարեկամ Հայ եկեղեցին և Ս. Էջմիածնին:

Ս. Քաղաք Երուսաղեմ այցելության Մեր օրիրը Մեզի պարգևեցին հոգեկան անփոխրինելի միջիբարություն, վասնզի Մենք գրիթե ամեն օր նոր սրբավայր մը տեսանք և շերմ հանդիպումներ ունեցանք բարձրաստիճան հոգեռականներու, կոռոնական հաստատությանց և պետական բարձր պաշտոնատարներու հետ: Բացառիկ գոհումակություն պատճառեց Մեզի Մեր այցելությունը Ամմանի արքայական պալատ և Մեր զրուցը նորին Վեհափառություն Հուսեին Թագավորին հետ, որ երիտասարդ, իրապես իմաստում, լուսամիտ և քաջակորով Վեհապետ մըն է, բարեխնամ բազովից և պաշտպանը Ս. Տեղյաց, Հայոց Պատրիարքության և Հորդանանի հայ ժողովորդին:

Մենք ուրախ եղանք նաև Ս. Քաղաքին մեջ անձամբ ճանշնալու և հանդիպումներ ունենալու Երուսաղեմի հունաց ամենապատիվ պատրիարք Թենեդիկոսի հետ, որ մեր օրերու եկեղեցական պետերու շարքին բացառիկ տեղ մը կրթավեց: Մենք ուրախությամբ Մեր օրհնությունը տարինք նաև Երուսաղեմի Ֆրանշիսկյան միաբանության և Ղատոց, Ասորվոց, Եթովպացվոց և Անգլիկան եկեղեցիներուն և հոգեռականության:

Երուսաղեմի հայոց վանքին մեջ վայելեցինք ամենասրտագին հյուրասիրությունը Եղիշե սրբազն պատրիարքին և Մրաց Հակոբյանց միաբանության:

Նորին Ամենապատվությունը ոչինչ խնայեց, որպեսզի Մեր այցելությունը մնա միշտ իր բարձրագույն մակարդակին վրա, դառնարդյունավետ և մնա հիշատակության արժանի գալիք ժամանակներուն համար: Այս առթիվ, Մենք անգամ մը ևս Մեր զերմագին գոհումակությունը և շնորհակալությունը կհայտնենք Մեր սիրեցալ եղբորը՝ Եղիշե սրբազն պատրիարքին և խորապես կհավատանք, թե Մեր սույն պատմական այցելությամբ, սերտ և շինարար գործակցության նոր սկիզբ մը հաստատվեցավ Մայր Աթոռին և Երուսաղեմի հայոց Առաքելական Ս. Աթոռին միշտ:

Երուսաղեմի մեջ Մենք նախագահեցինք Ս. Հարության Տաճարի նորոգության համագույն հանձնաժողովի նիստերուն, որոնց արդյունք եղավ ամբողջապես դրական:

Ս. Քաղաք Մեր այցելությունը ուրախության աղբյուր հանդիսացած նաև այլ տեսա-


կետով: Այնտեղեն, եղբայրական հրապեր ուղեցինք Մեծի Տաճար Կիլիկիո Գահակալին և երջանիկ եղանք, երբ հոկտեմբեր 26-ին նորին Սրբություն Խորեն շնորհազարդ Կաթողիկոսը պատասխանելով Մեր հրավերին, մեծ շքախմբով մը Անթիլիասեն ծրուսաղեմ ժամանեց: Մեր երկութիւ եղբայրական սիրո ողագործումով և փոխադարձ համաձայնությամբ, վերջ գտան 1956-են ի վեր ծայր տված անհասկացողությունները, վերահաստատվեցավ Հայ եկեղեցվո միասնությունը, վերահաստատվեցան բարեկամական և հոգեկործական կապերը մեր նվիրապետական բոլոր Աթոռներու միջն, նոր էջ մը բացվեցավ մեր եկեղեցական-ազգային կյանքի մեջ, որու վրա Մենք հավատացած ենք, թե հետզգետե պիտի արձանագրվին մեր բոլորի միասնական ճիգերով ձեռք բերված եկեղեցական ու ազգանվեր գործերը:

Այսօր, Մեր երկար ճանապարհորդութենեն վերադարձին, Մենք անգամ մը ևս կհայտնենք Մեր հաստատ համոզումը, թե Մենք և Մեր սիրեցալ եղբայրը Խորեն Կաթողիկոս, արթուն կերպով պիտի հսկենք, որպեսզի հոկտեմբեր 26-ի ոգին ամրապես արմատանամեր եկեղեցական ու ազգային կյանքեն ներս և դառնա կենսարեր ու պտղառատ:

Մեր ուղևորության եղրորդ հանդրվանը Եղիշե այցելությունը Կահիրե և Աղեքսանդրիա, ուր կապուին մոտ 40 000 հայեր:

Այնտեղ, բացի կրոնական արարողություններե, Մենք և Մեր ուղևեկիցները հաճախ առիթ ունեցանք գտնվելու մեր ժողովուրդին հետ, մշակութային միտությանց սրահներուն մեջ, երբ Մեր Կենդանի խոսքով և պատգամներով կամեցանք հոգեկան զորացնել ու զերմացնել մեր հավատացյալներու սրտերը, որպեսզի անոնք հաստատ ու անշարժ մնան իրենց կրոնական հավատքի վեմին վրա և մնան հավատարիմ հայ ազգային և հայրենական լուսավոր ավանդություններուն: Մշակութային զանազան դահլիճներուն մեջ դասախոսելու համար հրավիրվեցավ Մեր շքախուրի անդամ ճարտարապետ Միքայել Մազմանյան, որ հայ ճարտարապետության և հայրենի վերաշինության նվիրված իր հմուտ դասախոսություններով մեծ հետաքրքրություն և ոգևորություն ստեղծեց ամենուրեքի ժողովուրդի մեջ մեծ խանդակառություն առաջցուց նաև ռէշմիածին ֆիլմի ցուցադրությունը թե՛ Լոնդոն, թե՛ Երուսաղեմ, թե՛ Եղիշե պիտոս և թե՛ հետագային նաև Հնդկաստան:

Նոյեմբեր 15-ին Եգիպտոսեն ուղևորվեցանք Հնդկաստան: Սուլին ճանապարհորդության, բարի եղավ Մեզի ընկերանարու Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս,



Համարեն լրացուց և ամբողջացուց Մեր առաքելությունը ի Հնդկաց աշխարհ, իր Մանկագին գործակցությունը ընծայելով Մեր բոլոր առիթներով:

Նախ եղանք Դեհի, ուր այցելեցինք Հընդապահանի Հանրապետության Նախագահ Աստմաշուր գոկտ. Ռատահակրիշնային, մեծանուն Վարչապետ Զավահառալ Ներուին և այլ պետական անձանց:

Երեք օր Դեհի մնալե հետո, Մագրասի վրայով մեկնեցանք գետի Քուայամ, կեղունը Հնդիկ Քրիստոնյա Մալարար Եկեղեցին: Հնդկաստան կայցելեցինք հատուկ հրավիրով ծերունազարդ Բասիլիոս Բ Սրբազն Կաթողիկոսին, Գերազույն Պետր Մալարար Եկեղեցին, որու իշխանության ներքել կը ըստ նըլին մոտ մեկ ու կես միիոն հնդիկ քրիստոնյաներ, ուղղափառ միաբնակներ: Այցելեցինք իրենց ութը թիմական կեղունները, եկեղեցիներ և վանքեր, և ամենուրեք հանդիպեցանք բազմահազար հնդիկ քրիստոնյա հավատացյաներու, որոնք արտասովոր ցընծությամբ կիմավորեցին և կողջունին Մեզ, անվերջանալի հնդիկավոր թափորհեր կաղմած, նվազախմբերով, ծաղկազարդ կամարներով և երբեմն նոյնին կիղերով և գիշերային հրավառությամբ: Քուայամի մեջ հարկ եղավ, որ Մենք պատարագենք և քարոզենք բացոյացած, 15 000 բրիստոնյա հնդիկներու ներկայության:

Դրան Սրբություն Բասիլիոս Բ Կաթողիկոսի հետ ոճեցանք հատուկ խորհրդակցություններ, որով առավել ամրապնդեցինք մեր երկու գալանակից եկեղեցիներու կապերը և միասնաբար փափագ հայտնեցինք աշխատանք տանիլ, որպեսզի մեր եկեղեցիները և մեզի գալանակից մյուս եկեղեցիները՝ Ասորական, Եթովպական և Ղպտոց, առավել իրարու մոտենանք, առավել իրարու հետ աշխատակցինք միջեկեղեցական գործունեության գետնի վրա:

Այցելեցինք նաև Հնդկաստանի հայ եկեղեցական համայնքները՝ Մագրաս, Բոմբեյ և Կալկաթա, Հայկական հին կեղուններ, փառավոր անցյալով և հուշարձաններով և նվիրական գերեզմաններով:

Այսօր գովելի աշխատանք կտանին կալկաթայի և Բոմբեյի եկեղեցական վարչությունները և Հայկական միությունը: Մեծապես գնահատելի է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի գոյությունը և անոր տարած աշխատանքը, ուր հայեցի դաստիարակություն և միջնակարդ ուսում կտանան շուրջ 140 երկուու աշակերտներ, շատերը եկած Պարսկակատաննեն և Միջին Արևելքնեւ:

Վստահ ենք, թե Ս. էջմիածնեն Մեր տարած օրհնությունը և վերածնած Մայր Հայունիքի կենդանի իրականությունն ու ծաղկումը հոգեկան ամուր պատվանդաններ և կյանքի աղբյուրներ կհանդիսանան նաև հնդկահայ պատվական ժողովուրդին համար:

Ամփոփելով Մեր խոսքը և եղբակացնելով, կրնանք վկայել, թե սույն հայրապետական ուղևորությունը արտասահման ունեցավ հետեւալ գրական արդյունքները.

Ս. էջմիածնի աստվածային օրհնությամբ, անգամ մը ևս միթարվեցավ և հոգեկան զորացակ Սփյուռքի հայությունը:

Վերահաստատվեցավ Հայ եկեղեցվո միասնությունը, որով առավել ամրապնդվեցավ և խաղաղեցավ Սփյուռքի հայության եկեղեցական-ազգային կյանքը և նոր լուսավոր հեռանկարներ բացվեցան հայապահպանման նվիրական գործի ավելի հաջող կազմակերպման համար միացյալ ծիփերով:

Լիակատար հաջողությամբ պսակվեցավ Երուսաղեմի Ս. Հարության պատմական Տաճարի վերանորոգության գործը:

Առավել ամրապնդվեցան Հայաստանյաց եկեղեցվո եղբայրական կապերը Անգլիկան եկեղեցվո, Հունաց Օթոողորս Եկեղեցվո և Մալարար Հնդիկ Քրիստոնյա եկեղեցվո հետ:

Եվ, վերջապես, Մեր այս ուղևորությունը նպաստ մը հանդիսացավ աշխարհի խաղաղության և ծողովուրդներու բարեկամության համար մզկող մարդասիրական պայքարի հանապահի վրա:

Մենք այս անգամ ալ կվերադառնաք Մայր Աթոռ, խորապես միխթարված ու լավատես դեպի Հայ եկեղեցին և հայ ժողովուրդին ապագան:

Այստեղ, Հայունի երկրի մեջ, Ս. էջմիածնի կամարներուն ներքեն, մեր ստքի տակ հողը ամուր է և ապահով, մեր կյանքը խաղաղ է և հառաջընթաց, իսկ այստեղ, Սփյուռքի մեջ, Հայության հոգին առողջ է և կենդանի, վառ ամեն տեղ մեր սուրբ հավատքը. և մեր մշակութի լուսեղեն շահը:

Թող Աստված օրհնե մեր Եկեղեցին, մեր նվիրապետական Աթոռները և համայն մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի Սփյուռք աշխարհի, և պահան ու պահպան զանոնք խաղաղության և բարօրության մեջ, այժմ և հավիտայն: Ամեն:

#### Վ.Ա.Զ.Գ.Ե.Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 դեկտեմբեր 1963

ՀԶՄԻԱԾԻՆ

